«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Պ Ե Տ

N _____

«____» _____ 2015թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ
պարոն Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

14.08.2015թ. N 02/12.11/13992-15
հանձնարարականի վերաբերյալ

Հարգարժան պարոն նախարար

Ի կատարումն ՀՀ վարչապետի հանձնարարականի՝ հայտնում ենք հետևյալը.

1. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կենտրոն)՝ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում ՀՀ երկրորդ գործողությունների ծրագրով սահմանված 2015թ. հունիս ամսից պետական գնումների բողոքարկման խորհրդի նիստերի հեռարձակումը ապահովելու նպատակով պահանջվող սարքավորումների ցանկը, դրանց նախահաշվային գներն ու տեխնիկական նկարագրերի առաջարկներ ստանալու համար էլեկտրոնային եղանակով ծանուցել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր հնարավոր մասնակիցներին:

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի 2014թ. դեկտեմբերի 5-ի թիվ 1/250-Ա հրամանով պետական գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակումն ապահովելու նպատակով անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման գնման նպատակով ձևավորվել է մասնագիտական խումբ (կցվում է):

Վերոհիշյալ մասնագիտական խումբը, քննարկելով գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակումն ապահովելու նպատակով ձեռքբերվող և Կենտրոնում տեղադրվող անհրաժեշտ սարքավորումների վերաբերյալ հարցը և կատարելով շուկայի համապատասխան ուսումնասիրություններ, պարզել է, թե նիստերի առցանց հեռարձակումն ապահովելու նպատակով ինչպիսի սարքավորումներ են անհրաժեշտ ձեռքբերել (կցվում է):

2. Կենտրոնում անցկացվող գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակումն ապահովելու նպատակով առաջարկվել է ձեռք բերել «Էյչ Դի» տեսախցիկ՝ «Համա» ֆուլլ Էյչ Դի 1080Պ, համակարգիչ՝ «Ասուս Հ81Մ-Կ», 6 հատ խոսափող՝ «Պռո-Սաունդ Պռո-300», ձայնային վահանակ՝ «Ալտո» ԶՄԻԿԱ52, սնուցման սարք՝ «Սուպեր ստաբիլ» 3 վոլտ, 5 վատտ, շտատիվ՝ «Համա» Տրիպոդ Ստար 700: Կենտրոնի կողմից 22.05.2015թ. կազմակերպվել է «ԳԱԿ-ԲԸԱՀԱՊՁԲ-15/1» ծածկագրով բանակցային ընթացակարգի՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգի շրջանակներում միաժամանակյա ծանուցվել են «Տեսակենտրոն» ՍՊ, «ԷՄ ՅԻ ԷՖ Պրոդաքշն» ՍՊ, «Սիգրամ» ՍՊ, «Կոմպասս» ՍՊ, «Սոֆթլայն ինթերնեյշնլ» ՍՊ, «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊ և «Զիգզագ» ՍՊ ընկերությունները: Սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել «Կոմպասս» ՍՊ և «Տեսակենտրոն» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի արդյունքում Կենտրոնի և «Կոմպասս» ՍՊԸ-ի միջև 26.05.2015թ. կնքվել է թիվ ԳԱԿ-ԲԸԱՀԱՊՁԲ15/1-1 ծածկագրով առցանց հեռարձակումն իրականացնելու համար սարքավորումների մատակարարման գնման պայմանագիր (կցվում է):

Կենտրոնի և «Տեսակենտրոն» ՍՊԸ-ի միջև 26.05.2015թ. կնքվել է թիվ ԳԱԿ-ԲԸԱՀԱՊՁԲ15/1-2 ծածկագրով առցանց հեռարձակումն իրականացնելու համար սարքավորումների մատակարարման գնման պայմանագիր (կցվում է):

3. Առցանց հեռարձակումն իրականացնելու համար սարքավորումների ձեռքբերումը ՀՀ վարչապետի 19.05.2015թ. թիվ 81/4-15 հանձնարարականի համաձայն իրականացվել է Կենտրոնի միջոցների հաշվին, իսկ նախահաշվային գինը 21.05.2015թ. հաստատված Կենտրոնի 2015թ. գնումների պլանի համաձայն կազմել է 842.300 ՀՀ դրամ: Գնման ընթացակարգի արդյունքում կնքվել են 779.200 ՀՀ դրամի գնման պայմանագրեր:

4. ՀՀ վարչապետի 06.05.2015թ. թիվ 02/23.13/7501-15 հանձնարարականի համաձայն հանձնարարվել է ապահովել գնումների բողոքարկման խորհրդի նիստերի իրական ժամանակի ռեժիմով առցանց հեռարձակումը: Ի կատարումն ՀՀ վարչապետի հանձնարարականի՝ www.gnumner.am կայքում տեղադրվել է համապատասխան հղումը, իսկ 2015թ. հունիս ամսից գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակումները հասանելի են www.e-gov.am համացանցային կայքից և իրականացվում են www.youtube.com կայքի միջոցով:

Առդիր՝ 34 թերթ:

Պետի ժամանակավոր պաշտոնակատար Հ. ԹՈՒՆՅԱՆ

Կատարող՝
Գնումների բողոքարկման և ահազանգման բաժին
հեռ. 28-93-27